



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԿՈՏԱՅՔԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Կոտայք համայնք  
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Կոտայք, ( 0222)63757, kotayq.kotayq@mta.gov.am

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**  
**10 ՀՈՒՆՎԱՐԻ 2017 թվականի N 1**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԿՈՏԱՅՔԻ  
ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՄԵՆԱՄՅԱ ԱՐՁԱԿՈՒՐԴՆԵՐԻ  
ԺԱՆԱԿԱՅՈՒՅՅԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 5-րդ հոդվածի պահանջներով **ո Ր Ո Շ ՈՒ Մ** եմ .

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Կոտայքի համայնքապետարանի աշխատակազմի 2017 թվականի ամենամյա արձակուրդների ժամանակացույցը՝ համաձայն հավելվածի .

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից .

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ  ԱՇԽԱԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ



20/7 թ. հունվարի 10  
գ. Կոտայք





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԿՈՏԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ  
ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Կոտայք համայնք  
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Կոտայք, ( 0222)63757, kotayq.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

10 ՀՈՒՆՎԱՐԻ 2017 թվականի N 2

«ԱՂԱՍԻ ՍԱՂԱԹԵԼՅԱՆ» ԱԶ-ԻՆ 2017 ԹՎԱԿԱՆԻ 1-ԻՆ ԵՌԱՄՍՅԱԿԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՈԳԵԼԻՑ ԵՎ ԱԼԿՈՆՈԼԱՅԻՆ ԽՄԻՉՔՆԵՐԻ ՈՒ ԾԽԱԽՈՏԻ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ .

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի հուլիսի 19-ի N 843-Ն որոշման, Կոտայքի գյուղական համայնքի ավագանու 2016 թվականի դեկտեմբերի 7-ի N 38-Ն որոշման հիմք ընդունելով «Աղասի Սաղաթեյան» ԱԶ-ի 2016 թվականի դեկտեմբերի 28-ի հայտը **ո ր ո շ ու մ եմ** .

1. «Աղասի Սաղաթեյան» ԱԶ-ին տալ 2017 թվականի 1-ին եռամսյակի ընթացքում Կոտայք համայնքի 4-րդ փողոց թիվ 1 հասցեում գտնվող խանութում ոգելից և ալկոհոլային խմիչքների ու ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվություն / թույլտվությունը կցվում է / .

2. Թույլտվություն տալու հետ միաժամանակ «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համապատասխան գանձել տեղական տուրք .

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից .

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ  ՍԱՀԱԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

20 \_\_ թ. \_\_\_\_\_  
գ. Կոտայք



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԿՈՏԱՅՔԻ ՀԱՄԱՅՆՔԻ  
ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Կոտայք համայնք  
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Կոտայք, ( 0222)63757, kotayq.kotayq@mta.gov.am

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

10 ՀՈՒՆՎԱՐԻ 2017 թվականի N 3

« ԿԱՐԵՆ ՄՆԱԾԱԿԱՆՅԱՆ » ԱԶ-ԻՆ 2017 ԹՎԱԿԱՆԻ 1-ԻՆ ԵՌԱՄՍՅԱԿԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՈԳԵԼԻՑ ԵՎ ԱԼԿՈՆՈԼԱՅԻՆ ԽՄԻՉՔՆԵՐԻ ՈՒ ԾԽԱԽՈՏԻ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ .

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի հուլիսի 19-ի N 843-Ն որոշման, Կոտայքի գյուղական համայնքի ավագանու 2016 թվականի դեկտեմբերի 7-ի N 38-Ն որոշման հիմք ընդունելով «Կարեն Մնացականյան» ԱԶ-ի 2016 թվականի դեկտեմբերի 28-ի հայտը **ո Ր Ո Շ ՈՒ Մ ԵՄ** .

1. «Կարեն Մնացականյան» ԱԶ-ին տալ 2017 թվականի 1-ին եռամսյակի ընթացքում Կոտայք համայնքի 11-րդ փողոց թիվ 6/1 հասցեում գտնվող խանութում ոգելից և ալկոհոլային խմիչքների ու ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվություն / թույլտվությունը կցվում է / .
2. Թույլտվություն տալու հետ միաժամանակ «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համապատասխան գանձել տեղական տուրք .
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից .

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝  ՍԱԿԱԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ



20 \_\_ թ. \_\_\_\_\_  
գ. Կոտայք



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԿՈՏԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ  
ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Կոտայք համայնք  
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Կոտայք, ( 0222)63757, kotayq.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

10 ՀՈՒՆՎԱՐԻ 2017 թվականի N 4

« ԳԵՂԱՄ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ » ԱԶ-ԻՆ 2017 ԹՎԱԿԱՆԻ 1-ԻՆ ԵՌԱՄՍՅԱԿԻ  
ԸՆԹԱՑՔՈՒՄ ՈԳԵԼԻՑ ԵՎ ԱԼԿՈՆՈԼԱՅԻՆ ԽՄԻՉՔՆԵՐԻ ՈՒ ԾԽԱԽՈՏԻ  
ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ .

Համաձայն « Եղական ինքնակառավարման մասին » Հայաստանի Հանրապետության  
օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի, Հայաստանի Հանրապետության  
կառավարության 2007 թվականի հուլիսի 19-ի N 843-Ն որոշման, Կոտայքի գյուղական  
համայնքի ավագանու 2016 թվականի դեկտեմբերի 7-ի N 38-Ն որոշման հիմք ընդունելով  
« Գեղամ Համբարձումյան » ԱԶ-ի 2016 թվականի դեկտեմբերի 28-ի հայտը **ո ր ո շ ու մ  
եմ .**

1. « Գեղամ Համբարձումյան » ԱԶ-ին տալ 2017 թվականի 1-ին եռամսյակի ընթացքում  
Կոտայք համայնքի Կենտրոնական փողոց թիվ 14 հասցեում գտնվող խանութում ոգելից և  
ալկոհոլային խմիչքների ու ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվություն /  
թույլտվությունը կցվում է /.

2. Թույլտվություն տալու հետ միաժամանակ « Եղական տուրքերի և վճարների մասին »  
Հայաստանի Հանրապետության օրենքի համապատասխան գանձել տեղական տուրք .

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից .

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ  ԱՎԱԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԿՈՏԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ  
ՂԵՎԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Կոտայք համայնք  
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Կոտայք, ( 0222)63757, kotayq.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

10 ՀՈՒՆՎԱՐԻ 2017թվականի N 5

« ԷԼՄԻՐԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ » ԱԶ-ԻՆ 2017 ԹՎԱԿԱՆԻ 1-ԻՆ ԵՌԱՄՍՅԱԿԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՈԳԵԼԻՑ ԵՎ ԱԼԿՈՆՈԼԱՅԻՆ ԽՄԻՉՔՆԵՐԻ ՈՒ ԾԽԱԽՈՏԻ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ .

Համաձայն « Եղական ինքնակառավարման մասին » Հայաստանի Հանրապետության օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի հուլիսի 19-ի N 843-Ն որոշման, Կոտայքի գյուղական համայնքի ավագանու 2016 թվականի դեկտեմբերի 7-ի N 38-Ն որոշման հիմք ընդունելով « Էլմիրա Խաչատրյան » ԱԶ-ի 2016 թվականի դեկտեմբերի 28-ի հայտը **որոշում եմ** .

1. « Էլմիրա Խաչատրյան » ԱԶ-ին տալ 2017 թվականի 1-ին եռամսյակի ընթացքում Կոտայք համայնքի Կենտրոնական փողոց թիվ 5 հասցեում գտնվող խանութում ոգելից և ալկոհոլային խմիչքների ու ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվություն / թույլտվությունը կցվում է / .

2.Թույլտվություն տալու հետ միաժամանակ « Եղական տուրքերի և վճարների մասին » Հայաստանի Հանրապետության օրենքի համապատասխան գանձել տեղական տուրք .

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից .

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵՎԱՎԱՐ՝ ՍԱՀԱԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ



20 \_\_ թ. \_\_\_\_\_  
գ. Կոտայք



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԿՈՏԱՅՔԻ ՀԱՄԱՅՆՔԻ  
ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Կոտայք համայնք  
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Կոտայք, ( 0222)63757, kotayq.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

10 ՀՈՒՆՎԱՐԻ 2017 թվականի N 6

«ԱՐՄԻՆԵ ԱՂԱՋԱՆՅԱՆ» ԱԶ-ԻՆ 2017 ԹՎԱԿԱՆԻ 1-ԻՆ ԵՌԱՄՍՅԱԿԻ ԸՆԹԱՅՔՈՒՄ ՈԳԵԼԻՑ ԵՎ ԱԼԿՈՆՈԼԱՅԻՆ ԽՄԻՉՔՆԵՐԻ ՈՒ ԾԽԱԽՈՏԻ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ .

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի հուլիսի 19-ի N 843-Ն որոշման, Կոտայքի գյուղական համայնքի ավագանու 2016 թվականի դեկտեմբերի 7-ի N 38-Ն որոշման հիմք ընդունելով «Արմինե Աղաջանյան» ԱԶ-ի 2016 թվականի դեկտեմբերի 28-ի հայտը **որոշում եմ** .

1. «Արմինե Աղաջանյան» ԱԶ-ին տալ 2017 թվականի 1-ին եռամսյակի ընթացքում Կոտայք համայնքի Կենտրոնական փողոց թիվ 6 հասցեում գտնվող խանութում ոգելից և ալկոհոլային խմիչքների ու ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվություն / թույլտվությունը կցվում է / .

2. Թույլտվություն տալու հետ միաժամանակ «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համապատասխան գանձել տեղական տուրք .

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից .

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՍԱՀԱԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ



20 \_\_ թ. \_\_\_\_\_  
գ. Կոտայք



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԿՈՏԱՅՔԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Կոտայք համայնք  
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Կոտայք, ( 0222)63757, kotayq.kotayq@mta.gov.am

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

26 ՀՈՒՆՎԱՐԻ 2017 թվականի N 7

**ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏ ԳՈՒՄԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 17-րդ հոդվածի պահանջներով **ո թ ո շ ու մ ե մ**.

1. 2017 թվականի հունվարի 27-ին ժամը 10:00-ին Կոտայքի համայնքապետարանի շենքում գումարել համայնքի ավագանու արտահերթ նիստ հետևյալ **օրակարգով**.

1) Համայնքի ավագանու 2016 թվականի դեկտեմբերի 7-ի թիվ 38-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին .

2) Համայնքի ավագանու 2017 թվականի հունվարի 11-ի թիվ 1 որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին.

3) Համայնքի ավագանու 2017 թվականի հունվարի 11-ի թիվ 3 որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին .

4) Համայնքի ավագանու 2017 թվականի հունվարի 11-ի թիվ 4 որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին .

2. Արտահերթ նիստի օրակարգը, դրանում ընդգրկված հարցերի որոշման նախագծերը և համապատասխան փաստաթղթերն տրամադրել ավագանու անդամներին .

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՍԱՀԱԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

20/17թ. *Կոտայքի Ղեկավար*  
գ. Կոտայք







ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԿՈՏԱՅՔԻ ՀԱՄԱՅՆՔԻ  
ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Կոտայք համայնք  
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Կոտայք. ( 0222)63757, kotayq.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

27 ՀՈՒՆՎԱՐԻ 2017թվականի N 8

ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԿՈՏԱՅՔԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ 2017  
ԹՎԱԿԱՆԻՆ ԿԱՏԱՐՎՈՂ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՊԼԱՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ .

Ղեկավարվելով << Գնումների մասին >> Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ  
հոդվածի 3-րդ կետի պահանջներով **ո թ ո շ ու մ եմ** .

Հաստատել Կոտայքի գյուղական համայնքի կարիքների համար 2017 թվականին  
կատարվող գնումների պլանը համաձայն հավելվածի .

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝  ՍԱՀԱԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ



2017թ. հունվարի 27  
գ. Կոտայք



Հաստատում եմ  
 Կրթության համայնքի ղեկավար  
 Ա. Հարությունյան

Կրտայքի մարզի Կրտայքի գյուղական համայնքի կարիքների  
 համար 2017 թվականին կատարվող

**Գ Ն ՈՒ Մ Ն Ե Ր Ի Պ Լ Ա Ն**

Պատվիրագրու Կրտայքի համայնքապետարան

Ծրագիր

Անվանումը

Ֆինանսավորման աղբյուրը Համայնքի բյուջե

Գնման առարկայի		Գնման ընթացակարգը	Չափի միավորը	Միավորի գինը	Ընդամենը ծախսերը (դրամ)	Զանակ Ը
Միջանցիկ կոդը՝ ըստ CPV դասակարգման	անվանումը					
01 բաժին 01 խումբ 01 դաս ՄԱՍ 1 Ապրանքներ						
30192100	ռետին հասարակ	ԲԸԱԿ	հատ	150	3000.0	20.0
30192111	թանաքի բարձիկներ	ԲԸԱԿ	Դրամ	500	2000.0	4.0
30192114	թանաք, կնիքի բարձիկի համար	ԲԸԱԿ	հատ	1300	5200.0	4.0
30192121	գրիչ գնդիկավոր	ԲԸԱԿ	հատ	50	5000.0	100.0
30192125	մարկերներ	ԲԸԱԿ	Դրամ	350	7000.0	20.0
30192124	ֆլումաստերի տիպի գրիչներ	ԲԸԱԿ	Դրամ	250	5000.0	20.0
30192128	գրիչ գելային	ԲԸԱԿ	հատ	120	4800.0	40.0
30192130	մատիտներ	ԲԸԱԿ	Դրամ	80	1600.0	20.0
30192131	մեխանիկական կամ սրվող մատիտներ	ԲԸԱԿ	Դրամ	300	6000.0	20.0
30192133	սրիչներ	ԲԸԱԿ	Դրամ	100	2000.0	20.0
30192160	շտրիխներ	ԲԸԱԿ	Դրամ	250	5000.0	20.0
30192210	պոլիմերային ինքնակաշիւն ժապավեն, 48մմx100մ տնտեսական, մեծ	ԲԸԱԿ	հատ	400	4000.0	10.0
30192220	պոլիմերային ինքնակաշիւն ժապավեն, 19մմx36մ գրասենյակային, փոքր	ԲԸԱԿ	հատ	70	700.0	10.0
30192730	կազմ, լամինացիայի թաղանթ, A4 ձևաչափի	ԲԸԱԿ	հատ	100	2000.0	20.0
30192740	թուղթ գունավոր, A4 ձևաչափի	ԲԸԱԿ	տուփ	500	5000.0	10.0
30197111	կարիչի մետաղալարե կապեր, փոքր	ԲԸԱԿ	տուփ	150	3000.0	20.0
30197112	կարիչի մետաղալարե կապեր, միջին	ԲԸԱԿ	տուփ	200	4000.0	20.0
30197121	կոճգամ, երկաթյա	ԲԸԱԿ	տուփ	150	1500.0	10.0
30197122	կոճգամ, պլաստմասե զլխիկով	ԲԸԱԿ	տուփ	280	2800.0	10.0
30197210	թղթապանակներ, որտեղ թղթերը միացվում են օղակներով	ԲԸԱԿ	Դրամ	800	16000.0	20.0
30197231	թղթապանակ, պոլիմերային թաղանթ, ֆայլ	ԲԸԱԿ	հատ	1000	10000.0	10.0
30197232	թղթապանակ, արագակար, թղթյա	ԲԸԱԿ	հատ	100	2000.0	20.0
30197233	թղթապանակ, թելով, թղթյա	ԲԸԱԿ	հատ	100	2000.0	20.0
30197234	թղթապանակ, կոշտ կազմով	ԲԸԱԿ	հատ	800	16800.0	21.0

30197235	թղթապանակ՝ ամրակով	ԲԸԱԿ	հատ	750	15000.0	20.0
30197323	կարիչ, 50-ից ավելի թերթի համար	ԲԸԱԿ	հատ	7500	7500.0	1.0
30197322	կարիչ, 20-50 թերթի համար	ԲԸԱԿ	հատ	1800	7200.0	4.0
30197331	ղակիչ, քանոնով	ԲԸԱԿ	հատ	1500	6000.0	4.0
30197620	գրելու թուղթ	ԲԸԱԿ	Ղրամ	1000	6000.0	6.0
30197631	թուղթ, A4 ֆորմատի1 /21x29.7/	ԲԸԱԿ	տուփ	2200	114400.0	52.0
30199232	ծրար, մեծ, A4 ձևաչափի համար	ԲԸԱԿ	հատ	150	3000.0	20.0
30199231	նամակի ծրար, A5 ձևաչափի	ԲԸԱԿ	հատ	100	4000.0	40.0
30199238	նամակի ծրար՝ A6	ԲԸԱԿ	հատ	50	2000.0	40.0
30199420	թուղթ նշումների համար, սոսնձվածքով	ԲԸԱԿ	տուփ	1200	28800.0	24.0
30199430	թուղթ նշումների, տրցակներով	ԲԸԱԿ	տուփ	200	4800.0	24.0
30199792	օրացույցեր	ԲԸԱԿ	ղրամ	50	500.0	10.0
35821400	դրոշներ	ԲԸԱԿ	ղրամ	4000	48000.0	12.0
39263200	գրասենյակային գիրք, մատյան, 70-200էջ, տողանի	ԲԸԱԿ	հատ	600	6000.0	10.0
39263310	օրացույց, սեղանի	ԲԸԱԿ	հատ	1000	4000.0	4.0
39263320	օրացույց, պատի	ԲԸԱԿ	հատ	2500	15000.0	6.0
39263410	ամրակ, մետաղյա, փոքր	ԲԸԱԿ	տուփ	150	3000.0	20.0
39263510	սեղմակ, փոքր	ԲԸԱԿ	հատ	50	1000.0	20.0
39263520	սեղմակ, միջին	ԲԸԱԿ	հատ	70	1400.0	20.0
39263530	սեղմակ, մեծ	ԲԸԱԿ	հատ	100	2000.0	20.0
39241142	ղանակ՝ գրասենյակային, մետաղյա, փոքր	ԲԸԱԿ	հատ	500	2000.0	4.0
39241210	մկրատ, գրասենյակային	ԲԸԱԿ	հատ	500	2000.0	4.0
31531600	ցերեկային լամպ 120սմ	ԲԸԱԿ	հատ	1000	20000.0	20.0
31531230	էլեկտրական լամպ, 200W	ԲԸԱԿ	հատ	150	3000.0	20.0
39221490	սպունգներ	ԲԸԱԿ	հատ	200	4800.0	24.0
39812100	հատակի մածիկ, հատակի փայլեցման համար	ԲԸԱԿ	կիլոգրամ	1200	48000.0	40.0
39831241	օձառ հեղուկ, ձեռքի	ԲԸԱԿ	հատ	500	12000.0	24.0
39831247	ախտահանող հեղուկ՝ սանհանգույցի համար (խտանյութ)	ԲԸԱԿ	հատ	1500	18000.0	12.0
39831273	հատակի մաքրման նյութեր	ԲԸԱԿ	հատ	450	16200.0	36.0
39831274	էկրանի մաքրման նյութեր	ԲԸԱԿ	հատ	1200	14400.0	12.0
39514100	խավոտ սրբիչներ, բամբակյա	ԲԸԱԿ	հատ	500	6000.0	12.0
39831276	զուգարանների մաքրման նյութեր	ԲԸԱԿ	հատ	1200	14400.0	12.0
3951480	զուգարանի խոզանակներ	ԲԸԱԿ	հատ	1200	14400.0	12.0
33761100	զուգարանի թուղթ	ԲԸԱԿ	հատ	100	6000.0	60.0
39831280	ապակի մաքրելու միջոց	ԲԸԱԿ	հատ	500	24000.0	48.0
39831281	ապակի մաքրման լաթ	ԲԸԱԿ	հատ	100	8000.0	80.0
39812410	կահույքի փայլեցման միջոց	ԲԸԱԿ	հատ	1200	14400.0	12.0
39831282	կահույք մաքրելու լաթ	ԲԸԱԿ	հատ	200	9600.0	48.0
39831283	հատակի լվացման լաթ	ԲԸԱԿ	հատ	500	18000.0	36.0
39831284	հատակի մաքրման հեղուկ (խտանյութ)	ԲԸԱԿ	հատ	450	21600.0	48.0
39812300	փայլեցնող քսուկներ	ԲԸԱԿ	հատ	450	10800.0	24.0
39836000	ավել, սովորական	ԲԸԱԿ	հատ	1000	56000.0	56.0
39839300	գոգաթիակ	ԲԸԱԿ	հատ	5000	10000.0	2.0
39522330	մաքրող կտորներ	ԲԸԱԿ	հատ	500	12000.0	24.0
39522340	փայլեցնող կտորներ	ԲԸԱԿ	հատ	500	12000.0	24.0
39811100	օդի թարմացուցիչներ	ԲԸԱԿ	հատ	800	19200.0	24.0
39513200	թղթե անձեռոցիկ, երկչերտ	ԲԸԱԿ	հատ	200	7200.0	36.0

**ՄԱՍ 2 Ծառայություններ**

66111100	բանկային ծառայություններ	ԲԸԱԿ	ղրամ	100000	100000.0	1.0
----------	--------------------------	------	------	--------	----------	-----

65311100	էլեկտրականության բաշխում	ԲԸԱՀ	դրամ	500000	500000.0	1.0
65211100	գազի բաշխում	ԲԸԱՀ	դրամ	700000	700000.0	1.0
64211120	միջքաղաքային հեռախոսային ծառայություններ	ԲԸԱՀ	դրամ	400000	400000.0	1.0
64211130	քցչային հեռախոսների ծառայություններ	ԲԸԱՀ	դրամ	140000	140000.0	1.0
32411130	համացանց	ԲԸԱՀ	դրամ	160000	160000.0	1.0
98111120	մասնագիտացված կազմակերպությունների կողմից մատուցվող ծառայություններ	ԲԸԱՀ	դրամ	25000	50000.0	2.0
50311120	համակարգչային սարքերի պահպանման և վերանորոգման ծառայություններ	ԲԸԱՀ	դրամ	250000	250000.0	1.0
92411100	թերթերին բաժանորդագրման ծառայություններ	ԲԸԱՀ	դրամ	100000	200000.0	2.0
92311220	ժամանց վարողների կողմից մատուցվող ծառայություններ	ԲԸԱՀ	դրամ	200000	600000.0	3.0
79211150	աուդիտորական ծառայություններ	ԲԸԱՀ	դրամ	480000	480000.0	1.0

01-րդ թիվ 3 խումբ 3 դաս

ՄԱՍ 2 Ծառայություններ

72267000	ծրագրային ապահովման սպասարկման և վերանորոգման ծառայություններ	ԲԸԱՀ	դրամ	72000	72000.0	1.0
72267000	ծրագրային ապահովման սպասարկման և վերանորոգման ծառայություններ	ԲԸԱՀ	դրամ	43200	43200.0	1.0

01 բաժին 6 խումբ 1 դաս

ՄԱՍ 2 Ծառայություններ

71353200	չափազարկան հետազոտությունների ծառայություններ	ԲԸԱՀ	դրամ	50000	100000.0	2.0
99600000	պարտադիր վճարներ	ԳԾԾ	դրամ	5000	20000.0	4.0
99600000	սվիրատվ. այլ շահույթ չհետապնդող կազմակերպ.	ԳԾԾ	դրամ	40000	280000.0	7.0

02 բաժին 2 խումբ 1 դաս

ՄԱՍ 2 Ծառայություններ

75222000	ծառայություններ քաղաքացիական պաշտպանության ոլորտում	ԲԸԱՀ	դրամ	200000	400000.0	2.0
----------	---	------	------	--------	----------	-----

03 բաժին 2 խումբ 1 դաս

ՄԱՍ 2 Ծառայություններ

75222000	փրկարարական ծառայություններ	ԲԸԱՀ	դրամ	200000	400000.0	2.0
----------	-----------------------------	------	------	--------	----------	-----

04 բաժին 2 խումբ 1 դաս

ՄԱՍ 2 Ծառայություններ

85312320	խորհրդատվության ծառայություններ	ԲԸԱՀ	դրամ	50000	100000.0	2.0
----------	---------------------------------	------	------	-------	----------	-----

04 բաժին 05 խումբ 01 դաս

ՄԱՍ 3 Աշխատանքներ

45233142	ճանապարհների վերանորոգման աշխատանքներ	ՊԸ	դրամ	11617781	1,161,7781.0	1.0
71241200	նախագծերի պատրաստում, ծախսերի գնահատում	ԲԸԱՀ	դրամ	200000	200000.0	1.0

05 բաժին 1 խումբ 1 դաս

ՄԱՍ 1 Ապրանքներ

09134100	դիզելային յուղեր	ԲԸԱՀ	դրամ	500000	500000.0	1.0
09134220	դիզելային վառելիք (en 590)	ԾԲ	դրամ	1500000	1,500,000.0	1.0
34391100	տրակտորների պարագաներ	ԲԸԱՀ	դրամ	300000	300000.0	1.0

05 բաժին 3 խումբ 1 դաս

ՄԱՍ 2 Ծառայություններ

90720000	շրջակա միջավայրի պահպանություն	ԲԸԱՀ	դրամ	500000	500000.0	1.0
99600000	պարտադիր վճարներ	ԳԾԾ	դրամ	48000	48000.0	1.0

06 բաժին 3 խումբ 1 դաս

ՄԱՍ 2 Ծառայություններ

65111100	խմելու ջրի բաշխում	ԲԸԱԿ	դրամ	20000	20000.0	1.0
----------	--------------------	------	------	-------	---------	-----

06 բաժին 04 խումբ 01 դաս

ՄԱՍ 1 Ապրանքներ

31212000	ավտոմատ անջատիչ	ԲԸԱԿ	հատ	6000	36000.0	6.0
31221000	էլեկտրական ռելե	ԲԸԱԿ	հատ	10000	60000.0	6.0
31221100	սնուցման ռելե	ԲԸԱԿ	հատ	12000	72000.0	6.0
31321210	ցածր լարման մալուխ	ԲԸԱԿ	մետր	200	100000.0	500.0
31687000	հոսանքի կարգավորիչ	ԲԸԱԿ	հատ	5000	30000.0	6.0
31521000	լամպեր	ԲԸԱԿ	հատ	2000	502000.0	251.0

ՄԱՍ 2 Ծառայություններ

65310000	էլեկտրականության բաշխում	ԲԸԱԿ	դրամ	1200000	1200000.0	1.0
50231100	փողոցային լուսավորության սարքերի պահպանման ծառայություններ	ԲԸԱԿ	դրամ	300000	300000.0	1.0

08 բաժին 02 խումբ 03 դաս

ՄԱՍ 1 Ապրանքներ

39812600	մաքրող մածուկներ և փոշիներ	ԲԸԱԿ	հատ	1500	36000.0	24.0
3981245	օճառ, հեղուկ	ԲԸԱԿ	հատ	500	12000.0	24.0
39831280	ապակի մաքրելու միջոց	ԲԸԱԿ	հատ	500	12000.0	24.0
39831281	ապակի մաքրման լաթ	ԲԸԱԿ	հատ	500	24000.0	48.0
39831284	հատակի մաքրման հեղուկ (խտանյութ)	ԲԸԱԿ	հատ	500	12000.0	24.0
39831283	հատակի լվացման լաթ	ԲԸԱԿ	հատ	1000	24000.0	24.0
39812410	կահույքի փայլեցման միջոց	ԲԸԱԿ	հատ	1200	6000.0	5.0
39831282	կահույք մաքրելու լաթ	ԲԸԱԿ	հատ	500	12000.0	24.0
39836000	ավել, սովորական	ԲԸԱԿ	հատ	1000	24000.0	24.0
39835000	հատակ մաքրելու ձող, պլաստմասե, փայտյա	ԲԸԱԿ	հատ	2500	5000.0	2.0
39838000	ավել զոզաթիակի հետ, պլաստմասե	ԲԸԱԿ	հատ	2500	2500.0	1.0
39831270	սպունգ	ԲԸԱԿ	հատ	300	7200.0	24.0
33761100	զուգարանի բուլթ	ԲԸԱԿ	հատ	100	3500.0	35.0
39221420	խոզանակներ	ԲԸԱԿ	հատ	400	2000.0	5.0
31531230	էլեկտրական լամպ, 200W	ԲԸԱԿ	հատ	200	1800.0	9.0
31685000	էլեկտրական երկարացման լար	ԲԸԱԿ	հատ	1500	3000.0	2.0
3151600	ցերեկային լամպ 120սմ	ԲԸԱԿ	հատ	1000	13000.0	13.0

08 բաժին 02 խումբ 04 դաս

ՄԱՍ 2 Ծառայություններ

92311110	թաղերական խմբերի, երգչախմբերի, երաժշտական խմբերի, նվագախմբերի կողմից մատուցվող ժամանցային ծառայություններ	ԲԸԱԿ	դրամ	75000	150000.0	2.0
92311220	ժամանց վարողների կողմից մատուցվող ծառայություններ	ԲԸԱԿ	դրամ	200000	600000.0	3.0
92331210	երեխաների համար միջոցառումների կազմակերպման և անցկացման ծառայություններ	ԲԸԱԿ	դրամ	450000	450000.0	1.0

08 բաժին 3 խումբ 3 դաս

ՄԱՍ 2 Ծառայություններ

92410000	թերթերին բաժանորդագրման ծառայություններ	ԲԸԱԿ	դրամ	50000	200000.0	4.0
----------	---	------	------	-------	----------	-----

08 բաժին 4 խումբ 2 դաս

ՄԱՍ 2 Ծառայություններ

99600000	նվիրատվ. ալլ շահույթ չհետապնդող կազմակերպ.	ԳԾԾ	դրամ	50000	200000.0	4.0
----------	--	-----	------	-------	----------	-----

09 բաժին 1 խումբ 1 դաս

ՄԱՍ 2 Ծառայություններ

99600000	ընթացիկ դրամաշնորհ ԴՈԱԿ - ին	ԳԾԾ	դրամ	300000	300000.0	1.0
----------	------------------------------	-----	------	--------	----------	-----



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԿՈՏԱՅՔԻ ՀԱՄԱՅՆՔԻ  
ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Կոտայք համայնք  
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Կոտայք, ( 0222)63757, kotayq.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ  
02 ՓԵՏՐՎԱՐԻ 2017թվականի N 9

ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՈՂ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 10.02.2011 թվականի թիվ 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացը կազմակերպելու» կարգի 7-րդ կետի 1-ին ենթակետի ա) պարբերության պահանջներով **որոշում եմ**.

1. 2017 թվականին համայնքապետարանի կարիքների համար կատարվող գնումների գործընթացների կազմակերպման համակարգողի լիազորությունները վերապահել համայնքի ղեկավարի տեղակալ՝ Հենրիկ Շահրազյանին :

2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից :

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՍԱՀԱԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ



20/7թ. Կ. Կոտայք

*Սևակ Շահրազյան*



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԿՈՏԱՅՔԻ ՀԱՄԱՅՆՔԻ  
ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Կոտայք համայնք  
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Կոտայք, ( 0222)63757, kotayq.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

02 ՓԵՏՐՎԱՐԻ 2017թվականի N 10

ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՈՂ ԵՎ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ .

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 10.02.2011 թվականի թիվ 168-Ն որոշմամբ հաստատված «**Գնումների գործընթացը կազմակերպելու**» կարգի 7-րդ կետի 1-ին ենթակետի ա) և բ) պարբերությունների պահանջներով **ո թ ո շ ու մ ե մ** .

1. Կոտայքի համայնքապետարանի կարիքների համար անհրաժեշտ դիզեյային վառելիքի ձեռք բերման պատասխանատու ստորաբաժանման լիազորությունները վերապահել համայնքապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետ Մ. Մնացականյանին .
2. Սույն որոշման 1 -ին կետով նախատեսված գնումների կատարման նպատակով գնումների համակարգողի լիազորությունները վերապահել համայնքի ղեկավարի տեղակալ՝ Հենրիկ Շահրազանին .
3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից .

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ  ԳՆԱԿԱԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ



20/17թ.  02  
գ. Կոտայք



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԿՈՏԱՅՔԻ ՀԱՄԱՅՆՔԻ  
ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Կոտայք համայնք  
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Կոտայք, ( 0222)63757, kotayq.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

02 ՓԵՏՐՎԱՐԻ 2017թվականի N 11

ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՈՂ ԵՎ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ .

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 10.02.2011 թվականի թիվ 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացը կազմակերպելու» կարգի 7-րդ կետի 1-ին ենթակետի ա) և բ) պարբերությունների պահանջներով **ո Ր Ո Շ ՈՒ Մ** .

1. Կոտայքի համայնքապետարանի կարիքների համար գրենական պիտույքների ձեռք բերման գնման գործընթացի պատասխանատու ստորաբաժանման լիազորությունները վերապահել համայնքապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետ՝ Մարիամ Մնացականյանին .
2. Սույն որոշման 1-ին կետով նախատեսված գնումների համակարգողի լիազորությունները վերապահել համայնքի ղեկավարի տեղակալ՝ Հենրիկ Շահբազյանին .
3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից .

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ  ՍԱՀԱԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ



2017թ.  02  
գ. Կոտայք





**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԿՈՏԱՅՔԻ ՀԱՄԱՅՆՔԻ  
ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Կոտայք համայնք  
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Կոտայք, ( 0222)63757, kotayq.kotayq@mta.gov.am

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**  
02 ՓԵՏՐՎԱՐԻ 2017թվականի N 12

**ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՈՂ ԵՎ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ .**

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 10.02.2011 թվականի թիվ 168-Ն որոշմամբ հաստատված «**Գնումների գործընթացը կազմակերպելու**» կարգի 7-րդ կետի 1-ին ենթակետի ա) և բ ) պարբերությունների պահանջներով **որոշում եմ .**

1. Կոտայքի համայնքապետարանի կարիքների համար «**Ներհամայնքային փողոցների ասֆալտապատ մակերևույթի փոսային և դաշտամիջյան ճանապարհների նորոգման աշխատանքների**» ձեռք բերման նպատակով գնման գործընթացի պատասխանատու ստորաբաժանման լիազորությունները վերապահել համայնքապետարանի աշխատակազմին .
2. Սույն որոշման 1-ին կետով նախատեսված գնումների կատարման նպատակով գնման ընթացակարգի համակարգողի լիազորությունները վերապահել համայնքի ղեկավարի տեղակալ՝ Հենրիկ Շահբազյանին .
3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից .

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐՆԵՐ

ՍԱՀԱԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ



20/16թ. *Վերապահում 02*  
գ. Կոտայք



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԿՈՏԱՅՔԻ ՀԱՄԱՅՆՔԻ  
ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Կոտայք համայնք  
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Կոտայք, ( 0222)63757, kotayq.kotayq@mta.gov.am

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

03 ՓԵՏՐՎԱՐԻ 2017 թվականի N 13

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 8-Ի ԹԻՎ 48 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ  
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով « Իրավական ակտերի մասին » Հայաստանի Հանրապետության օրենքի  
70-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի պահանջներով **որոշում եմ** .

1. Համայնքի ղեկավարի 2016 թվականի սեպտեմբերի 8-ի « Հայաստանի  
Հանրապետության Ջրային տնտեսության պետական կոմիտեին հատկացված հողամասերի  
սահմանների ճշտման և անշարժ գույքին հասցե տրամադրելու մասին » թիվ 48 որոշման  
մեջ կատարել հետևյալ փոփոխությունը .

1) որոշման 1-ին կետում « Հայաստանի Հանրապետության» բառերը փոխարինել  
« համայնքային » բառով .

2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից .



ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ *[Signature]* ՍԱՀԱԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

2017 թ. *սեպտեմբերի 03*  
գ. Կոտայք



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԿՈՏԱՅՔԻ ՀԱՄԱՅՆՔԻ  
ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Կոտայք համայնք  
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Կոտայք, ( 0222)63757, kotayq.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

07 ՓԵՏՐՎԱՐԻ 2017թվականի N 14

ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՁԵՎԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 10.02.2011 թվականի թիվ 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 11-րդ կետի 1-ին ենթակետի գ ) պարբերության պահանջները **որոշում եմ**.

1. Կոտայքի համայնքապետարանի կարիքների համար գրենական պիտույքների ձեռք բերման նպատակով ձևավորվող գնահատող հանձնաժողովի լիազորությունները վերապահել համայնքապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետ Մ. Մնացականյանին.
2. Գնահատող հանձնաժողովի քարտուղարի լիազորությունները վերապահել համայնքի ղեկավարի տեղակալ Հ. Շահբազյանին .
3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից .

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՍԱՀԱԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ



20/7թ. Վերաբեգյանի 7  
գ. Կոտայք



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԿՈՏԱՅՔԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Կոտայք համայնք  
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Կոտայք, ( 0222)63757, kotayq.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

07 ՓԵՏՐՎԱՐԻ 2017թվականի N 15

ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՁԵՎԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 10.02.2011 թվականի թիվ 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 11-րդ կետի 1-ին ենթակետի գ ) պարբերության պահանջները **ո Ր Ո Շ ՈՒ Մ ԵՄ** .

1. ԿՄԿՀ-ՇՀԱԶԲ 17/01 ( ԳԱԿ-ՇՀԱԶԲ 11/1 ) ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով դիզելային վառելիքի ձեռք բերման նպատակով ձևավորել գնահատող հանձնաժողով հետևյալ կազմով՝

Պ. Վարդանյան - համայնքապետարանի՝ աշխատակազմի քարտուղար / հանձնաժողովի նախագահ /

Գ. Մկրտչյան - ավագանու անդամ / հանձնաժողովի անդամ /

Ա. Գևորգյան - համայնքապետարանի աշխատակազմի առաջին կարգի մասնագետ / հանձնաժողովի անդամ /

2. Սույն որոշմամբ ձևավորվող գնահատող հանձնաժողովի քարտուղար նշանակել համայնքի ղեկավարի տեղակալ Հ. Շահրազյանին

3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից .

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝  ՍԱՀԱԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ



20/7թ.   
գ. Կոտայք



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԿՈՏԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Կոտայք համայնք  
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Կոտայք, ( 0222)63757, kotayq.kotayq@mta.gov.am

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

14 ՓԵՏՐՎԱՐԻ 2017 թվականի N 16

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 15-Ի ԹԻՎ 12 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ  
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ .**

Համաձայն « **Իրավական ակտերի մասին**» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետի, 72-րդ հոդվածի 1-ին մասի ,, բ ,, կետի , հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կառավարության 2004 թվականի ապրիլի 22-ի « **Քաղաքացիական պաշտպանության պլանների մշակման կարգը հաստատելու մասին**» թիվ 633-Ն որոշման պահանջները

**ո Ր Ո Շ ՈՒ Մ ԵՄ .**

1. Կոտայքի գյուղական համայնքի ղեկավարի 2012 թվականի մայիսի 15-ի « **Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Կոտայք համայնքի քաղաքացիական պաշտպանության պլանը հաստատելու մասին**» թիվ 12 որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

1) Համայնքի ղեկավարի որոշմամբ հաստատված N 1,2,3,4,5,6,7,8,9 հավելվածները շարադրել նոր խմբագրությամբ, համաձայն N 1,2,3,4,5,6,7,8,9 հավելվածների.

2. Հաստատել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Կոտայք համայնքի քաղաքացիական պաշտպանության պլանը համաձայն հավելվածի .

3. Ուժը կորցրած ճանաչել համայնքի ղեկավարի 2012 թվականի մայիսի 15-ի « **Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Կոտայք համայնքի քաղաքացիական պաշտպանության պլանը հաստատելու մասին**» թիվ 12 որոշումը:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**  **ՍԱՀԱԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**  


20/17թ.   
գ. Կոտայք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԿՈՏԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ  
ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ

ՊԼԱՆ

ԿՈՏԱՅՔ

2017

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Որոշում Կոտայք համայնքի Քաղաքացիական Պաշտպանության պլանը հաստատելու մասին .....	2
Գլուխ I ընդհանուր դրույթներ	
1.1 Պլանի սահմանումը և նպատակը.....	3
1.2 Պլանում ներգրավվող մարմինները և նրանց գործառույթները .....	3-4
1.3 Պլանի իրավական հիմքերը .....	4
Գլուխ II Հակառակորդի հարձակման հետևանքով համայնքի տարածքում ստեղծված իրավիճակի գնահատումը	
2.1 Համայնքի տարածքի համառոտ բնութագիրը .....	4-5
2.2 Համայնքի տարածքում ստեղծված հավանական իրավիճակը՝ զենքի տեսակների կիրառման և հակառակորդի դիվերսիոն-հետախուզական խմբերի գործողությունների հետևանքով .....	5
2.3 Համայնքի տարածքում ստեղծվող հնարավոր իրավիճակի գնահատման եզրակացություններ .....	5-6
Գլուխ III Քաղաքացիական պաշտպանության միջոցառումների իրականացումը քաղաքացիական պաշտպանության համակարգը խաղաղ պայմաններից ռազմական դրության աշխատանքային ռեժիմի փոխադրման ժամանակ	
3.1 Քաղաքացիական պաշտպանության համակարգի խաղաղ պայմաններից ռազմական դրության աշխատանքային ռեժիմի փոխադրման կարգը.....	6-7
3.2 Կապի և ազդարարման կազմակերպումը.....	7
3.3 Քաղաքացիական պաշտպանության հետախուզության կազմակերպումը...	7
3.4 Քաղաքացիական պաշտպանության միջոցառումների կազմակերպումը և իրականացումը.....	7-9
3.4.1 Անհատական պաշտպանության կազմակերպումը.....	7-8
3.4.2 Պատասպարման կազմակերպումը.....	8
3.4.3 Տարահանման կազմակերպումը.....	8-9
3.5 Փրկարարական և անհետաձգելի վթարավերականգնողական աշխատանքների կազմակերպումը և քաղաքացիական պաշտպանության ուժերի խմբավորումների ստեղծումը.....	9-10
3.5.1 Փրկարարական և անհետաձգելի վթարավերականգնողական աշխատանքների կազմակերպումը.....	9-10
3.5.2 Քաղաքացիական պաշտպանության ուժերի խմբավորումների ստեղծումը.	10

3.6	Քաղաքացիական պաշտպանության միջոցառումների ապահովման կազմակերպումը.....	10-14
3.6.1	Հասարակական կարգի պահպանության ապահովում.....	10-11
3.6.2	Հակահրդեհային պաշտպանություն .....	11
3.6.3	Բժշկական ապահովումը.....	11
3.6.4	Սննդամթերային և նյութատեխնիկական ապահովումը.....	11
3.6.5	Լուսաբողարկման կազմակերպումը.....	11-12
3.6.6	Չափագիտական ապահովումը.....	12-13
3.6.7	Հիդրոօդերևութաբանական ապահովումը.....	13
3.6.8	Տրանսպորտային ապահովումը.....	13
3.6.9	Ինժեներական ապահովումը.....	13-14
6.10	Ճառագայթային, քիմիական և կենսաբանական պաշտպանության կազմակերպումը.....	14
3.6.11	Գյուղատնտեսական կենդանիների և մշակաբույսերի պաշտպանության կազմակերպումը.....	14
3.7	Փոխգործողությունների կազմակերպումը.....	15
Գլուխ IV	Քաղաքացիական պաշտպանության միջոցառումների իրականացումը հակառակորդի հանկարծակի հարձակման դեպքում	
4.1	Միջոցառումների կազմակերպումն ու անցկացումը <<Օդային տագնապ>> ազդանշանի դեպքում.....	15
4.2	Միջոցառումների կազմակերպումն ու անցկացումը <<Օդային տագնապի ավարտ>> ազդանշանի դեպքում.....	16
Գլուխ V	Կառավարման կազմակերպումը.....	16-17





**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԿՈՏԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Կոտայք համայնք  
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Կոտայք, ( 0222)63757, kotayq.kotayq@mta.gov.am

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

14 ՓԵՏՐՎԱՐԻ 2017 թվականի N 16

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 15-Ի ԹԻՎ 12 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ  
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ .**

Համաձայն « **Իրավական ակտերի մասին**» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետի, 72-րդ հոդվածի 1-ին մասի ,, բ ,, կետի , հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կառավարության 2004 թվականի ապրիլի 22-ի « **Քաղաքացիական պաշտպանության պլանների մշակման կարգը հաստատելու մասին**» թիվ 633-Ն որոշման պահանջները

**ո Ր Ո Շ ՈՒ Մ ԵՄ .**

1. Կոտայքի գյուղական համայնքի ղեկավարի 2012 թվականի մայիսի 15-ի « **Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Կոտայք համայնքի քաղաքացիական պաշտպանության պլանը հաստատելու մասին**» թիվ 12 որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

1) Համայնքի ղեկավարի որոշմամբ հաստատված հավելվածները շարադրել նոր խմբագրությամբ, համաձայն հավելվածների.

2. Հաստատել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Կոտայք համայնքի քաղաքացիական պաշտպանության պլանը համաձայն հավելվածի .

3. Ուժը կորցրած ճանաչել համայնքի ղեկավարի 2012 թվականի մայիսի 15-ի « **Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Կոտայք համայնքի քաղաքացիական պաշտպանության պլանը հաստատելու մասին**» թիվ 12 որոշումը:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**  **ՍԱՀԱԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**



20/7 թ.   
գ. Կոտայք



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԿՈՏԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ  
ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՊԼԱՆ

Գլուխ I  
Ընդհանուր դրույթներ

1.1 ՊԼԱՆԻ ՍԱՀՄԱՆՈՒՄԸ ԵՎ ՆՊԱՏԱԿԸ

1. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Կոտայք համայնքի (այսուհետ՝ համայնք) քաղաքացիական պաշտպանության պլանը (այսուհետ՝ պլան) սահմանում է Հայաստանի Հանրապետության վրա զինված հարձակման, դրա անմիջական վտանգի առկայության կամ Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի կողմից պատերազմ հայտարարվելու դեպքում տեղական ինքնակառավարման մարմնի, քաղաքացիական պաշտպանության ծառայությունների, տարահանման հանձնաժողովի, կազմակերպությունների խնդիրները, գործողություններն ու դրանց իրականացման կարգը քաղաքացիական պաշտպանության բնագավառում: Պլանի նպատակն է տեղական ինքնակառավարման մարմնի, կազմակերպությունների խնդիրները, գործողություններն ու դրանց իրականացման կարգը՝ համայնքի բնակչությանն ու նյութական արժեքները պաշտպանելու համար:

1.2 ՊԼԱՆՈՒՄ ՆԵՐԳՐԱՎԿՈՂ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ ԵՎ ՆՐԱՆՑ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

2. Պլանում ներգրավվող մարմիններ են՝

- 1) համայնքապետարանը
- 2) քաղաքացիական պաշտպանության ծառայություններ
- 3) կազմակերպությունները
- 4) քաղաքացիական պաշտպանության կազմավորումները
- 5) փրկարարական ուժերը

3. Պլանում ներգրավված մարմինների գործառույթներն են

- 1) տեղական ինքնակառավարման մարմնի գործառույթներն են
  - ա) կազմակերպում և իրականացնում են համայնքում քաղաքացիական պաշտպանությունը
  - բ) իրականացնում է միջոցառումներ՝ համայնքային ենթակայության կազմակերպությունների անվտանգ աշխատանքն ապահովելու նպատակով.
  - գ) կազմակերպում է համայնքի քաղաքացիական պաշտպանության միջոցառումների պլանավորումը և իրականացումը.
  - դ) իրականացնում է համայնքի բնակչության, նյութական և մշակութային արժեքների տարահանումը, բնակչության պատսպարումը և անհատական պաշտպանության միջոցներով ապահովումը.
  - ե) ստեղծում է համայնքային քաղաքացիական պաշտպանության ծառայություններ
  - զ) իրականացնում է համայնքի բնակչության ազդարարումը.
  - է) ստեղծում է քաղաքացիական պաշտպանության կազմակերպման համար անհրաժեշտ ուժեր և ապահովում են այդ ուժերի պատրաստակալությունը.
  - ը) իրականացնում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված այլ լիազորություններ.
- 2) քաղաքացիական պաշտպանության ծառայությունների գործառույթներն են
  - Ա) քաղաքացիական պաշտպանության միջոցառումների ապահովման պլանավորումը և իրականացումը քաղաքացիական պաշտպանության համակարգի պատրաստակալության բերման ժամանակ.
  - Բ) քաղաքացիական պաշտպանության ծառայությունների կազմավորումների ստեղծումը, դրանց ապահովումն անհրաժեշտ նյութատեղնիկական միջոցներով, պատրաստումն ու պահպանումը մշտական պատրաստակալության վիճակում.

Գ) ստեղծված իրադրության մասին իրական տեղեկատվության ստացման, վերլուծման և գնահատման կազմակերպումը և քաղաքացիական պաշտպանության համապատասխան պետին փրկարարական, անհետաձգելի վթարավերականգնողական աշխատանքների կազմակերպման վերաբերյալ առաջարկություններ ներկայացնելը.

3) կազմակերպությունների գործառույթներն են.

Ա) իրականացնում են իրենց աշխատողների պաշտպանությունը

Բ) ստեղծում են փրկարարական և վթարավերականգնողական աշխատանքների իրականացման համար անհրաժեշտ ուժեր.

Գ) իրականացնում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված այլ լիազորություններ.

4) փրկարարական ուժերի գործառույթներն են

ա) մարդկանց կյանքի փրկության և առողջության պահպանման առաջնայնությունը

Փրկարար ուժերի և փրկարարների գործունեությունն արդարացված ռիսկի շրջանակներում.

Բ) փրկարարական կազմավորումների կենտրոնացված կառավարումը.

Գ) փրկարարական և անհետաձգելի վթարավերականգնողական աշխատանքների կատարման, հաղորդակցության ուղիների, կենսաապահովման և ռազմավարական նշանակության կազմակերպությունների վերականգնման համար փրկարար ուժերի մշտական պատրաստականությունը:

### 1.3 ՊԼԱՆԻ ԻՐԱՎԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ

4. Պլանի իրավական հիմքեր են՝

1) Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը. 2) « Պաշտպանության մասին » Հայաստանի Հանրապետության օրենքը. 3) « Քաղաքացիական պաշտպանության մասին » Հայաստանի Հանրապետության օրենքը. 4) « Ռազմական դրության իրավական ռեժիմի մասին » Հայաստանի Հանրապետության օրենքը. 5) Հայաստանի Հանրապետության այլ օրենքները և իրավական ակտերը:

### Գլուխ II

#### ՀԱԿԱՌԱԿՈՐԻ ՀԱՐԶԱԿՄԱՆ շԵՏԵՎԱՆՔՈՎ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՍՏԵՂԾՎԱԾ ԻՐԱՎԻՃԱԿԻ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ

##### 2.1 ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔԻ ՀԱՄԱՌՈՏ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

5. Կոտայք համայնքը գտնվում է Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզում տարածքը կազմում է 1415 հա: Համայնքի տարածքում բնակելի տների քանակը կազմում է 357, իսկ բազմաբնակարան շենքերի քանակը 0 միավոր:

Համայնքի բնակչությունը կազմում է 2010 մարդ, որից՝ 1017 կին, 993 տղամարդ: Բնակչության թվաքանակը ըստ տարիքի մինչև 1 տարեկան 23 մարդ, 1-ից 9 տարեկան 227 մարդ, 10-ից 17 տարեկան 182 մարդ, 17 տարեկանից բարձր 1578 մարդ: Բնակչության խտությունը 1կմ<sup>2</sup> վրա կազմում է 140 մարդ:

Համայնքը սահմանակից է Երևան քաղաքին ( սահմանի երկարությունը 35 կմ), Նոր Գյուղ համայնքին ( սահմանի երկարությունը 3 կմ):

6. Համայնքում քամիների միջին արագությունն է 25մ/վ, ուղղությունը՝ հյուսիս արևմտյան, անդորրը՝ 20 օր ամռանը, 45 օր ձմռանը:

7. Համայնքի պետական սեփականություն հանդիսացող և համայնքային ենթակայության ընդհանուր օգտագործման ավտոճանապարհային ցանցի երկարությունը կազմում է 2 կմ համայնքային նշանակության:

8. Համայնքի տարածքում առկա են 2 ավտոճանապարհի կամուրջներ:

9. Համայնքի տարածքում գտնվում / գերծում / են «Կոտայքի ԱԱԴԿ» ՓԲԸ, միջնակարգ դպրոցը:

10. Համայնքի ջրամատակարարումն իրականացվում է օրվա կարգավորիչ ջրամբարից 150 խոր.մ տարողությամբ:

11. Համայնքի տարածքում խոշոր եղջերավոր կենդանիներ՝ 709 գլուխ, մանր եղջերավոր կենդանիներ՝ 578 գլուխ, ձիեր և ավանակներ՝ 3 գլուխ, թռչուններ՝ 1382 թև:

## 2.2 ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՍՏԵՂԾՎԱԾ ՀԱՎԱՆԱԿԱՆ ԻՐԱՎԻՃԱԿԸ՝ ՁԵՆՔԻ

### ՏԵՍԱԿՆԵՐԻ ԿԻՐԱՌՄԱՆ ԵՎ ՀԱԿԱՌԱԿՈՐԴԻ ԴԻՎԵՐՍԻՈՆ-ՀԵՏԱԽՈՒԶԱԿԱՆ ԽՍԲԵՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԵՏԵՎԱԼՔՈՎ

12. Հավանական հակառակորդի զինված ուժերի ավիացիայի, հրթիռահրետանային և դիվերսիոն հետախուզական խմբերի ազդեցության թիրախ համայնքում հնարավոր է հանդիսանան՝

1) Համայնքապետարանի վարչական շենքը.

2) պաշտպանական, տնտեսության համար ուղղակիորեն նշանակություն ունեցող, բարձր վտանգավորություն ներկայացնող, հատուկ կարևորագույն նշանակություն ունեցող կազմակերպությունները, ջրամբարները.

3) «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերության 3 ենթակայանները և դրանց կապող 110 կվ լարման օդային գծերը.

4) Համայնքը սնուցող ջրամատակարարման համակարգերը.

5) ֆիրաված և բջջային հեռախոսակապի հանգույցներն ու ապահովող սարքավորումները.

6) «Հայփոստ» փակ բաժնետիրական ընկերության բաժանմունքը.

7) ավտոմոբիլային և երկաթուղային ճանապարհները ու ճանապարհային կառույցները.

8) բնակելի / շենքերը և տները / ֆունդի տարածքները.

13. Նկատի ունենալով, որ հակառակորդի կողմից միջուկային, կենսաբանական, քիմիական զենքերի կիրառումը քիչ հավանական է, նաև քիչ հավանական է ՀԱԷԿ-ի նկատմամբ հարվածներ հասցնելը, ուստի համայնքում ճառագայթային իրավիճակի առաջացումը նույնպես քիչ հավանական է.

## 2.3. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՍՏԵՂԾՎՈՂ ՀՆԱՐԱՎՈՐ ԻՐԱՎԻՃԱԿԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

14. Հակառակորդի գործողությունների արդյունքում համայնքի տարածքում հնարավոր է առաջանա հետևյալ իրավիճակը՝

Ձենքի տեսակների կիրառման դեպքում շենքերը և շինությունները կարող են կրել տարբեր աստիճանների վնասվածքներ, որոնք բաժանվում են լրիվ, ուժեղ, միջին ու թույլ.

Լրիվ վնասվածության դեպքում փլատակներում հիմնականում շենքերի, շինությունների կրող կոնստրուկցիաների, սարքավորումների, կահույքի մասեր են: Կարող են քանդվել նաև պաշտպանական կառույցների ծածկերը, մուտքի պաշտպանիչ դռները, շարքից կարող են դուրս գալ ներսի բոլոր սարքավորումները, հնարավոր է, որ բոլոր պատասպարվածները զոհվեն: Լրիվ վնասվածության դեպքում շարքից կարող են դուրս գալ նաև գազատար և ջրատար խողովակները: Կամուրջների լրիվ վնասվածության դեպքում, կամուրջների թոփքները դեֆորմացվում են և երթևեկությունը կամուրջներով կարող է վերականգնվել հենարանների թոփքների ուժեղացման աշխատանքներից հետո:

Միջին և թույլ վնասվածության դեպքում հիմնականում վնասվում են շենքերի և շինությունների կտուրները, իսկ հիմնական կոնստրուկցիաները պահպանվում են.

15. Համայնքի տարածքի նկատմամբ հակառակորդի գործողությունների հավանականությունը շատ փոքր է, ուստի շենքերի և շինությունների ավերվածության և իրավիճակների առաջացման հավանականությունը նույնպես փոքր է.

16. Քաղաքացիական պաշտպանության միջոցառումների կազմակերպման և անցկացման վրա ազդող առանձնահատկությունները՝

1) ընդհանուր օգտագործման տեղական նշանակության ավտոճանապարհների ինժեներական կառույցների վնասման պարագայում անհնար կղաճնա անձնակազմի տարահանումը և փրկարարական ուժերի առաջանցումը դեպի վնասված տեղամասեր.

Հայաստանի Հանրապետության համայնքի տարածքում ստեղծվող հնարավոր իրավիճակի ընդհանուր բնութագիրը.

2) կրնդ հատվի ֆիքսված և բջջային հեռախոսակապն ամբողջովին.

3) հեռուստաաշտարակների վնասման դեպքում կրնդ հատվի կենտրոնական հեռարձակման ալիքների հաղորդումները, տեղական հեռուստաալիքների վնասման դեպքում տեղական հեռարձակումը.

17. Համայնքի տարածքում փրկարարական և փրկարարական անհետաձգելի վթարավերականգնողական աշխատանքներ իրականացնելու համար նախատեսվում են քաղաքացիական պաշտպանության կազմավորումներ 4 հատ, 34 մարդ անձնակազմով: Քաղաքացիական պաշտպանության ուժերը պատրաստականության են բերվում ազդարարման, հավաքի, համալրման, հազեցման, խնդրադրման, անվտանգության գծով հրահանգավորման միջոցով.

### III ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԸ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ ԽԱՂԱՂ ՊԱՅՄԱՆՆԵՐԻՑ ՌԱԶՄԱԿԱՆ ԴՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՌԵԺԻՄԻ ՓՈԽԱԴՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿ

#### 3.1. ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԽԱՂԱՂ ՊԱՅՄԱՆՆԵՐԻՑ ՌԱԶՄԱԿԱՆ ԴՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՌԵԺԻՄԻ ՓՈԽԱԴՐՄԱՆ ԿԱՐԳԸ

18. համայնքապետարանը և կազմակերպությունները «Մշտական» պատրաստականության աշխատակարգում զբաղվելով իրենց ամենօրյա աշխատանքային գործունեությամբ, պետք է պատրաստ լինեն քաղաքացիական պաշտպանության միջոցառումների իրականացմանը, իսկ «Բարձր» և «Լրիվ» պատրաստության աշխատակարգի միջոցառումների ցանկը կտրամադրվի մարզային փրկարարական վարչության կողմից քաղաքացիական պաշտպանության պլանը գործողության մեջ դնելու ժամանակ.

19. Հայաստանի Հանրապետության զինված ուժերը «Բարձր» պատրաստականության աստիճանի փոխադրվելու ժամանակ, Հայաստանի Հանրապետության վարչապետի որոշմամբ, տեղական ինքնակառավարման մարմիններն ու կազմակերպությունները անցկացնում են «Բարձր» պատրաստականության աշխատակարգի միջոցառումներ՝ ուղղված բնակչության պաշտպանությանը, քաղաքացիական պաշտպանության ուժերի պատրաստությանը, ինչպես նաև հատուկ, կարևորագույն նշանակության կազմակերպությունների գործունեության կայունության բարձրացմանը.

20. Համայնքի քաղաքացիական պաշտպանության համակարգը փոխադրվում է «Լրիվ» պատրաստականության աշխատակարգի Հայաստանի Հանրապետության նախագահի կողմից ռազմական դրություն հայտարարելու դեպքում.

21. Եթե մինչև Հայաստանի Հանրապետության ռազմական դրություն հայտարարվելը քաղաքացիական պաշտպանության «Բարձր» պատրաստականության աշխատակարգի միջոցառումները չեն իրականացվել, կամ իրականացվել են ոչ բոլոր միջոցառումները, ապա դրանք իրականացվում են Հայաստանի Հանրապետությունում ռազմական դրություն հայտարարվելուց հետո, հնարավորինս սեղմ ժամկետներում:

22. Քաղաքացիական պաշտպանության համակարգի «Լրիվ» պատրաստականության աշխատանքային ռեժիմի դեպքում քաղաքացիական պաշտպանության ղեկավար կազմը իրենց լիազորությունների սահմանում գործողության մեջ են դնում քաղաքացիական պաշտպանության պլանները, կազմակերպում ու անցկացնում են այդ պլաններով նախատեսված միջոցառումները բացի տարահանումից, որն իրականացվում է Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ, իսկ հակառակորդի հանկարծակի հարձակման դեպքում՝ պետական կառավարման տարածքային, տեղական ինքնակառավարման մարմինների և տվյալ տարածքի զինվորական կայազորի կողմից՝ իրենց իրավասությունների սահմաններում:

23. Քաղաքացիական պաշտպանության համակարգի ռազմական դրության աշխատանքային ռեժիմի փոխադրելու վերաբերյալ ազդանշանները ստացվում է Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության փրկարար ծառայության (այսուհետ՝ ՀՀ ԱԻՆ ՓԾ) Կոտայքի մարզային փրկարարական վարչության ղիսպետչերական կետերից:

### 3.2 ԿԱՊԻ ԵՎ ԱԶՂԱՐԱՐՄԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

24. Համայնքի քաղաքացիական պաշտպանության ղեկավար կազմի, քաղաքացիական պաշտպանության ծառայությունների, տարահանման հանձնաժողովի, ռազմական դրության պայմաններում գործունեությունը շարունակող կազմակերպությունների, քաղաքացիական պաշտպանության կազմավորումների ղեկավարների միջև կապն իրականացվում է ռադիոկապի և ուղիղ հեռախոսակապի միջոցով:

25. Քաղաքացիական պաշտպանության միջոցառումների իրականացման ժամանակ կապը կազմակերպելու համար օգտագործվում է համայնքում գործող քաղաքային և միջքաղաքային ցանցերը, բջջային և ֆաքսիմիլային կապերը:

### 3.3 ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԵՏԱԽՈՒԳՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

Քաղաքացիական պաշտպանության հետախուզությունը իրականացվում է համայնքի ամբողջ տարածքում:

Հետախուզության նպատակն է իրադրության վերաբերյալ անհրաժեշտ տվյալների ձեռքբերում՝ որոշումներ ընդունելու համար՝ ուղղված բնակչության և քաղաքացիական պաշտպանության ուժերի անձնակազմի պաշտպանությանը, ինչպես նաև փրկարարական և անհետաձգելի վթարավերականգնողական աշխատանքների իրականացմանը:

26. Հետախուզական ուժերի և միջոցների բաշխումը ըստ փրկարարական աշխատանքների տեղամասերի կատարվում է իրավիճակից ելնելով: Հետախուզությունն իրականացնող բոլոր ուժերի փոխգործողությունները կազմակերպվում են ըստ խնդիրների, ուղղությունների, կազմակերպությունների, ժամանակի և գործողությունների տեսակների:

27. Հետախուզական տվյալները զեկուցում են կապի միջոցներով, ինչպես նաև նախապես մշակված զեկույցների հաշվետախտակի համաձայն: Հետախուզության այն տվյալները, որոնք պահանջում են շտապ որոշման ընդունում, զեկուցվում են անմիջապես:

### 3.4 ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՎ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԸ

#### 3.4.1. ԱՆՀԱՏԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

28. Անհատական պաշտպանության միջոցները նախատեսված են պաշտպանելու մարդու օրգանիզմը, մաշկը և հանդերձանքը ռադիոակտիվ, ուժեղ ներգործող թունավոր նյութերից և մանրէաբանական միջոցներից:

29. Անհատական պաշտպանության միջոցները բաժանվում են 2 խմբի՝ շնչառական օրգանների պաշտպանության միջոցներ և մաշկի պաշտպանության միջոցներ:

30. Շնչառական օրգանների պաշտպանության միջոցներ են հանդիսանում զտող և մեկուսացնող հակազագերը, շնչաղիմակները և հասարակ միջոցները՝ փոշի չթափանցող գործվածքային դիմակները և բամբակաթանգիֆային վիրակապերը:

31. Բնակչության պաշտպանության նպատակով օգտագործվում են մի քանի տիպի զտող հակազագեր՝

1) համագորային՝ նախատեսված գորքերի և քաղաքացիական պաշտպանության ղեկավար կազմի պաշտպանության համար.

2) քաղաքացիական՝ նախատեսված կազմավորումների անձնակազմի և բնակչության համար.

3) արդյունաբերական՝ նախատեսված ուժեղ ներգործող թունավոր նյութերից պաշտպանվելու համար:

32. Մթնոլորտում թթվածնի անբավարար քանակության դեպքում, ինչպես նաև այն պայմաններում, երբ զտող հակազագերը չեն ապահովում պաշտպանությունը վտանգավոր նյութերից, օգտագործվում են մեկուսացնող հակազագեր:

33. Անհատական պաշտպանության միջոցների բաշխումը կազմավորումների անձնակազմին, կազմակերպությունների աշխատողներին և բնակչությանը իրականացվում է անհատական պաշտպանության միջոցների բաշխման կետերում, որոնք ծավալվում են տարահանման և ընդունման հավաքակայաններում, կազմակերպություններում, ուսումնական և բժշկական հաստատություններում:

#### 3.4.2. ՊՍՏՄՊԱՐՄԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

34. Բնակչության պատսպարումը պաշտպանական կառույցներում մարդկանց կյանքի և գործունեության ապահովման հիմնական միջոցն է: Բնակչության պատսպարումը ռազմական դրության և հակառակորդի հանկարծակի հարձակման կամ դրա անմիջական վտանգի առկայության դեպքում իրականացվում է «Օդային տազնապ» ազդարարման ազդանշանով:

35. Բնակչության պատսպարումն իրականացվում է հետևյալ պաշտպանական կառույցներում՝

1) ստորգետնյա հատուկ շինություններում՝ ապաստարաններում, թաքստոցներում (հակաճառագայթային, պարզագույն), նկուղներում, կիսանկուղներում, խորացված տարածքներում.

2) բնակելի ֆոնդի տարածքներում (նկուղային տարածքներ):

36. Բնակչության պատսպարման համալիր միջոցառումներն ամրագրված են քաղաքացիական պաշտպանության նախապատրաստական և հիմնական միջոցառումների ցանկերում և ընդգրկում են՝

1) պաշտպանական կառույցների վաղորդ շինարարություն.

2) պաշտպանական կառույցների պահպանումը պատրաստ վիճակում.

3) պաշտպանական կառույցների նպատակային օգտագործման կազմակերպում.

4) արագ կառուցվող ապաստարանների և հակաճառագայթային թաքստոցների շինարարության կազմակերպումն ու ապահովումը պատերազմի սպառնալիքի դեպքում:

37. Բնակչության պատսպարումն իրականացվում է նախորդ մշակված բնակչությանը պաշտպանական կառույցներին ամրագրման հաշվարկի համաձայն:

#### 3.4.3. ՏԱՐԱՀԱՆՄԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

38. Տարահանումն իրականացվում է Հայաստանի Հանրապետության վրա զինված հարձակման, դրա անմիջական վտանգի առկայության կամ Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի կողմից պատերազմ հայտարարելու, ինչպես նաև այնպիսի արտակարգ

իրավիճակների առաջացման կամ անմիջական սպառնալիքի դեպքում, որի հետևանքով որոշակի տարածքներում (բնակավայրերում, կազմակերպություններում) կարող են առաջանալ մարդկանց կյանքի և կենսագործունեության բնականոն պայմանների վրա բացասաբար ազդող գործոններ:

39. Ձենքի տեսակների կիրառման դեպքում տարահանման մասին որոշում ընդունում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը, իսկ հակառակորդի հանկարծակի հարձակման դեպքում՝ պետական կառավարման տարածքային, տեղական ինքնակառավարման մարմինները և տվյալ տարածքի զինվորական կայազորի պետը՝ իր իրավասության սահմաններում:

40. Ռազմական դրության ժամանակ համայնքում տարահանման միջոցառումներ չեն իրականացվում, իսկ արտակարգ իրավիճակների առաջացման կամ անմիջական սպառնալիքի դեպքում ջրածածկման գոտում հայտնված բնակչության մասնակի տարահանման միջոցառումները իրականացվում են հետիոտն՝ անվտանգ գոտի:

41. Տարահանման միջոցառումների կազմակերպման և իրականացման նպատակով համայնքի ղեկավարի- քաղաքացիական պաշտպանության պետի որոշմամբ ստեղծված է տարահանման- ընդունման հանձնաժողով, որի նախագահը ի պաշտոնե հանդիսանում է համայնքների ղեկավարի տեղակալը:

42. Բնակչության տարահանումը կազմակերպելու, հաշվարկելու նպատակով ստեղծվում են տարահանման հավաքակալաններ:

43. Բնակչությունը տարահանման ազդանշան (հրահանգ) ստանալու դեպքում ժամանում է տարահանման հավաքակալան:

44. Տարահանման հավաքակալաններից բնակչությունը տեղափոխվում է շարասյուններով՝ հետիոտն:

### 3.5 ՓՐԿԱՐԱՐԱԿԱՆ ԵՎ ԱՆՇԵՏԱԶԳԵԼԻ ՎՅԱՐԱՎԵՐԱԿԱՆԳՆՈՂԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՎ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՈՒԺԵՐԻ ԽՄԲԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ՍՏԵՂԾՈՒՄԸ

#### 3.5.1. ՓՐԿԱՐԱՐԱԿԱՆ ԵՎ ԱՆՇԵՏԱԶԳԵԼԻ ՎՅԱՐԱՎԵՐԱԿԱՆԳՆՈՂԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

45. Հակառակորդի հարվածից հետո իրավիճակի գնահատմանն զուգընթաց իրականացվում է խափանված կառավարման համակարգի վերականգնում և փրկարարական, անհետաձգելի վթարավերականգնողական աշխատանքների կազմակերպում: Խոցման օջախներում փրկարարական աշխատանքները կանոնակարգելու նպատակով ստեղծվում են աշխատանքային տեղամասեր, որտեղ փրկարարական աշխատանքների անընդհատությունը ապահովելու նպատակով Մարզի քաղաքացիական պաշտպանության պետի որոշմամբ սահմանվում են աշխատանքային երկու և ավելի հերթափոխեր:

Փրկարարական աշխատանքները ներառում են՝

- 1) աշխատանքային տեղամասերի և երթուղիների ընդհանուր և հատուկ հետախուզություն.
- 2) հրդեհների մեկուսացում և մարում.
- 3) տուժածների որոնում և դուրս բերում վտանգավոր տարածքներից.
- 4) թաքստոցների և ապաստարանների մուտքերի մաքրում.
- 5) տուժածներին բժշկական օգնության ցուցաբերում և բժշկական հաստատություններ տեղափոխում.

6) վտանգավոր տարածքներից բնակչության տարահանում:

46. Անհետաձգելի վթարավերականգնողական աշխատանքները ներառում են՝

